



Australian
BORDER FORCE

Կարևոր տեղեկատվություն Ավստրալիա մեկնող ուղևորների պարտադիր կարանտինի վերաբերյալ

Կարևոր տեղեկատվություն Ավստրալիա ժամանող ուղևորների պարտադիր կարանտինի կարգադրությունների վերաբերյալ

13 օգոստոսի 2020թ.

Ի պատասխան COVID-19 համավարակին՝ Ավստրալիան սահմանել է ճանապարհորդության սահմանափակումներ և պարտադիր կարանտինի պահանջներ:

Ավստրալիա ժամանող բոլոր ուղևորները ենթակա են 14-օրյա պարտադիր կարանտինի Ավստրալիա ժամանման իրենց առաջին մուտքային կետում:

Այս ժամանակահատվածում ուղևորներին կտրամադրվի հարմարավետ կացարան և թույլ չի տրվի ճանապարհորդել երկրի ներսում (ներառյալ իրենց բնակության վայրը) կամ շարունակել իրենց տեղաշարժը երկրի ներսում մինչև 14- օրյա պարտադիր կարանտինի շրջանը չավարտվի:

Նահանգային և տարածքային կառավարությունները Ավստրալիայի կառավարության աջակցությամբ կառավարում են կարանտինի կարգադրությունները: Նահանգների և տարածքների մեծ մասում ձեռք կխնդրեն մուծում կատարել կարանտինի արժեքի վճարման համար: Լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել համապատասխան նահանգային և տարածքային կառավարությունների առողջապահության կայքերում:

Տարանցիկ ուղևորներ

Ավստրալիա ժամանող միջազգային տարանցիկ ուղևորները կարող են մեկնել մեկ այլ միջազգային չվերթով, որը մեկնում է ձեր ժամանած քաղաքից: Տարանցիկ ուղևորները պարտավոր են.

- մնալ օդանավակայանում, եթե պետք է սպասեք ձեր հաջորդ թռիչքին մինչև 8 ժամ
- պարտադիր կարանտին անցնել կառավարության կողմից նշանակված հաստատությունում, եթե դուք սպասելու եք ձեր հաջորդ թռիչքին 8-ից 72 ժամ

Տարանցիկ ուղևորները չեն կարող ճանապարհորդել Ավստրալիայի ներսում, նույնիսկ դիմավորել մեկնող միջազգային թռիչք մեկ այլ քաղաքում:

Ինչ կարելի է ակնկալել Ավստրալիա ժամանելիս

- Ավստրալիա ժամանելիս դուք պետք է հետևեք ինքնաթիռի անձնակազմի և պետական պաշտոնյաների կողմից ձեռք տրված հրահանգներին:
- Դուք կստանաք ձեր ուղեբեռը և կանցնեք սահմանային մաքսազերծման բնականոն գործընթացները (մաքսային, ներգաղթային և կենսաանվտանգություն):
- Սահմանային ստուգումը անցնելուց հետո պետական պաշտոնյաները ձեզ կուղեկցեն դեպի ավտոբուսները, որոնք ձեզ կտեղափոխեն ձեր կացարանը:
- Չնարավոր է, որ դուք բավական երկար ժամանակ սպասեք մինչև ձեր կացարան հասնելը: Պետական պաշտոնյաները կփորձեն այս սպասման ժամանակահատվածը դարձնել հնարավորինս հարմարավետ: Շնորհակալ կլինենք ձեր համակցործակցության և համբերատարության համար:

Ձեր 14-օրյա կարանտինի ժամանակահատվածի կարգադրությունները

- Պետական պաշտոնյաները ձեր ժամանմանը կսպասեն կարանտինի կացարանում: Նրանք ուրախ կլինեն պատասխանել ձեր ցանկացած հարցին, որ կարող եք ունենալ ձեր ժամանումից հետո, և օգնել ձեզ ձեր կարանտինի ընթացքում:
- Կացարանը կունենա բոլոր հարմարությունները և ծառայությունները, որոնք ձեզ հարկավոր կլինեն ձեր այնտեղ մնալու ընթացքում: Կացարանը կունենա ապահով և հիգիենիկ սենյակներ, ուտելիք, ջուր և բժշկական օգնություն:
- Եթե դուք ունեք բժշկական կարիքներ, օրինակ՝ կանոնավոր դեղամիջոցների դեղատոմսեր, միջոցառումներ կնախատեսվեն բավարարելու այս պահանջները:
- Չնարավոր է COVID-19-ի թեստավորում անցնեք առաջին 48 ժամվա ընթացքում և հետո կարանտինի 10-ից 12-րդ օրերի ընթացքում: Եթե հրաժարվեք թեստավորումից, հնարավոր է, որ ավելի երկար ժամանակահատված անցկացնեք կարանտինի մեջ: Թեստավորման ճշգրիտ կարգադրությունները կախված են նահանգներից և տարածքներից:

Important update relating to all passengers arriving to Australia - ABF factsheet - 12092020 - Armenian



Australian
BORDER FORCE

Կարևոր տեղեկատվություն Ավստրալիա մեկնող ուղևորների պարտադիր կարանտինի վերաբերյալ

- 2015 թվականի Կենսաանվտանգության օրենքի և Նահանգային օրենսդրության համաձայն, դուք պարտավոր եք մնալ հատկացված կացարանում՝ մինչև չստանաք բժշկական թույլտվություն մուտք գործել ավստրալական հասարակություն:

Այս կարգադրությունները կպարտադրվեն Նահանգային և տարածքային կառավարությունների կողմից և կաջակցվեն Ավստրալիայի պետական գործակալությունների կողմից:

Ձեր 14-օրյա կարանտինի շրջանի ավարտը

Երբ ձեր պարտադիր կարանտինի շրջանն ավարտվի, դուք կարող եք ճանապարհորդել Ավստրալիայի ներսում: Նկատի առեք, որ Նահանգները և տարածքները կարող են ունենալ մուտքի և կարանտինի պահանջներ: Նախքան ճանապարհորդելը՝ դուք պետք է ստուգեք մուտքի և կարանտինի պահանջները յուրաքանչյուր Նահանգի և տարածքի համար:

Ավստրալիայի Առողջապահության Նախարարության կայքը պարունակում է հղումներ Նահանգների և տարածքների ճանապարհորդության սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության մասին՝ <https://www.health.gov.au/news/health-alerts/novel-coronavirus-2019-ncov-health-alert/coronavirus-covid-19-restrictions/coronavirus-covid-19-advice-for-international-travellers#quarantine-for-incoming-travellers>